ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՆԻՍՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 16-19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի /ԵՀԽ/ Հայաստանյան Կլոր սեղանի ղեկավարության տարեկան ժողովը:

Ժողովին մասնակից Կլոր սեղանի ղեկավար անդամներին և միջազգային տարբեր նվիրատու կազմակերպություններ ներկայացնող հրավիրյալ անդամներին ընդունեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Իր խորին երախտագիտությունը և գնահատանքը հայտնելով ժողովականներին իրենց ծավալած օգտաշատ գործունեության համար, Նորին Սրբությունը շեշտեց, որ արդեն վաղուց ժամանակն է փոխել բնակչությանը ցույց տրվող օգնության քաղաքականությունը և նրանց զերծ պահել կախվածության հոգեբանությունից: «Մեր ժողովուրդը պետք է գործի իբրև անկախ ժողովուրդ՝ եթե մենք անկախ պետություն ենք: Մեր երկրի առողջ տնտեսության բանալին գործի պայմանների և միջոցների ստեղծումն է», կարևորեց Վեհափառ Հայրապետը:

Վեհափառ Հայրապետի օրհնությունից և բարեմաղթանքներից հետո ժողովականները շարունակեցին աշխատանքը:

Առաջին օրը Հայաստանյան Կլոր սեղանի գործունեության մասին մանրամասն զեկույց տվեց գրասենյակի տնօրեն Կարեն Նազարյանը:

Խոսելով անցյալ՝ 1997 թվականից ձեռնարկված և իրագործված ծրագրերի մասին, պարոն Նազարյանն անդրադարձավ արդեն սկսված և ներկայումս շարունակվող ծրագրերին, որոնց թվում են «Շեն» հասարակական կազմակերպության կողմից չոր մրգերի և անուշեղենի պատրաստումը, Հայկական Ավետարանչական ընկերակցության կողմից բժշկական կենտրոնի ստեղծումը, որն այժմ կահավորվում է, «Դանիական-հայկական առաքելություն» կազմակերպության կողմից՝ Գևորգյան հոգևոր ճեմարանի կահավորումը և ուսանողության համար գրականության ձեռքբերումը, ինչպես նաև Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցու արմատական վերանորոգումը, որը սկիզբ է առել անցյալ տարվա սեպտեմբերից և կավարտվի այս տարվա նոյեմբերին, փոքրիկ նվերները կիրակնօրյա դպրոցների ուսուցիչներին, բրիտանական «Քրիստոնեական օգնություն», գերմանական «Դիակոնիշես Վերկ», շվեյցարական «Միջեկեղեցական օգնություն» կազմակերպությունների և Ծվեդական Եկեղեցու համատեղ ջանքերով Գորիսի շրջանում տեղի ունեցած ջրհեղեղի պատճառած վնասների հատուցումը և վերականգնումը, և իհարկե, Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հովանավորությամբ և անհատ նվիրատուների ու «Դանիական Եկեղեցու օգնություն» կազմակերպության

ֆինանսավորմամբ իրականացված վարկային հատկացումները՝ փոխատվության սկզբունքով: Անցյալ տարի այդ սկզբունքով վարկ է ստացել 25 ընտանիք, իսկ ընթացիկ տարում՝ ևս 66 ընտանիք, որոնց տրամադրվել է շուրջ 94.000 ԱՄՆ դոլար:

Իր ելույթի երկրորդ մասում Կ. Նազարյանը ներկայացրեց 1998 թվականի համար առաջարկված բազմաբնույթ ծրագրերը, ինչպես նաև նրանք, որոնք արդեն մեկնարկել են ընթացիկ տարում: Այսպես, «Շեն» կազմակերպությունն իր գործունեության ոլորտն ընդլայնելով, ձեռնարկել է նաև ջեմերի և չոր բանջարեղենի արտադրությունը:

Հայ Առաքելական Եկեղեցու թեմերում իրագործելի մի շարք ծրագրեր ներկայացվեցին ժողովականների ուշադրությանը, որոնք նպատակ ունեն զարկ տալ քրիստոնական կրթությանը և դաստիարակությանը, առողջապահական ծառայություններին, անասնաբուծությանը, տնայնագործությանը, գորգագործությանը: Այդ ծրագրերի իրականացումից ստացված եկամուտներով հնարավոր կլինի հոգալ թեմի բնակչության հոգսերը, կստեղծվեն աշխատատեղեր, կկասեցվի գյուղացիների արտահոսքը գյուղերից: Օրինակ՝ Արարատյան Հայրապետական թեմի կողմից նախատեսվում է Դիմիտրով գյուղում կառուցել ալրաղաց, որը կծառայի նաև հարևան գյուղերի բնակիչներին:

Հայ Կաթոլիկ Եկեղեցու «Կարիտաս» կազմակերպության ներկայացուցիչը ներկայացրեց Գյումրիում սպորտդպրոցի և վերականգնողական կենտրոնի աշխատանքային ու մարզական պայմանների բարելավման ծրագիր:

«Էկո-99» հասարակական կազմակերպությունը ներկայացրեց աղուտներում նոր մոդելային ֆերմաների ստեղծման Հայաստանի համար շատ հեռանկարային ծրագիրը:

«Բիոէկոմեդ» հասարակական կազմակերպությունն առաջարկեց չոր մրգերի, բանջարեղենի և դեղաբույսերի էկոլոգիապես ապահով արտադրության համար անհրաժեշտ նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագիր:

Հայ Ավետարանական Եկեղեցին և «Բժիշկների ու ինժեներների միություն» /ԲԻՄ/ հասարակական կազմակերպությունը ժողովականների ուշադրությանն արժանացրեցին տեղեկատվական մի կենտրոնի ստեղծման նախագիծ, որը կնպաստի առողջապահության բնագավառի մասնագետների գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը, ինչպես նաև մասնագիտական սարքավորումներին տիրապետման կատարելագործմանը:

Եկեղեցաշինության բնագավառում կարևորվեց Գուգարքի թեմի Դսեղ գյուղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերանորոգման ծրագիրը: 1900 թ. կառուցված այդ եկեղեցին խորհրդային իշխանության տարիներին վերածվել էր երկրագիտական թանգարանի և այսօր իր ներկա վիճակով որպես եկեղեցի չի կարող ծառայել:

Ավետարանչական ընկերակցությունը նույնպես առաջարկեց մի շարք նոր ծրագրեր, որոնց թվում են մանկական բարեգործական շարժական կլինիկայի համար սարքավորումների, առողջապահական գրականության ձեռքբերումը, խոզաբուծական ֆերմայի ստեղծումը Գորիսում, տարեց մարդկանց կենցաղային, առողջական և հոգեբանական պայմանների բարելավումը, ինչպես նաև ծեր և անաշխատունակ մարդկանց համար բարեգործական ճաշարանի հիմնումը Երևանում:

Կեսօրից հետո Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի ջուրջ հանգամանալից վերլուծական եղույթով հանդես եկավ ՀՀ Արտաքին գործոց նախարարի խորհրդական Արա Պապյանը:

Երեկոյան ժողովի մասնակիցներն այցելեցին «Ֆիդայի» բարեգործական միություն: Միությունն Արցախի ազատագրական պայքարում զոհված ազատամարտիկների զավակների համար անգլերեն լեզվի և կոմպյուտերային ուսուցման անվճար դասընթացների կազմակերպման ծրագիր է ներկայացրել: Դասընթացներն ավարտելուց հետո երիտասարդները կարող են ստանալ համապատասխան աշխատանք:

Ժողովի երկրորդ օրը, սեպտեմբերի 17-ին, Ալեքսանդր Բելոպոպսկին և Կարեն Նազարյանը ժողովականների քննարկմանը ներկայացրեցին Հայաստանյան Կլոր սեղանի գրասենյակի 1999-2001 թթ. գործունեության ընդհանուր հայեցակետը, նրա զարգացման և ընդլայնման հեռանկարները, նշեցին առաջնահերթ բնագավառները, պատասխանեցին ժողովականների բազմաթիվ հարցերին:

Կեսօրից հետո ժողովի մասնակիցներն այցելեցին անցյալ տարվանից ձեռնարկված ծրագրերի իրականացման օբյեկտները, որոնց թվում են Վաղարշապատում հալվե աճեցնող դեղագործական հաստատությունը, Բյուրականում վերանորոգվող Ս. Հովհաննես եկեղեցին, կույրերի միավորումը, որտեղ կույրերի համար ստեղծված փորձարարական համակարգչային ընթերցասարահը և մատչելի բրելի-դիսփլեյները նրանց հնարավորություն են տալիս ընթերցել տեքստեր նաև հայերեն և ռուսերեն լեզուներով: Ժողովականները դիտեցին նաև Երևանի թիվ 79 դպրոցի թատերական խմբակի բեմադրած Աստվածաշնչյան թեմայով ներկայացումը Համազգայինի թատրոնի շենքում: Թատերական խմբակի կազմումը և գործունեությունը հնարավոր է դարձել «Նուարդ» տիկնանց միության նախաձեռնության և ամերիկյան «Միացյալ մեթոդիստական օգնության կոմիտե»-ի ֆինանսական օժանդակության շնորհիվ:

Բեմադրությունից հետո ժողովի մասնակիցներին հյուրընկալեց Հայկական Ավետարանչական ընկերակցությունը:

Այս տարի ներկայացված ծրագրերին ծանոթանալու շրջանակում ժողովի մասնակիցներն այցելեցին «Բիոէկոմեդ» հասարակական կազմակերպություն և տեղում տեղեկացան նրանց ներկայացրած նորարարական առաջարկին:

Վերջին օրվա՝ սեպտեմբերի 19-ի ամփոփիչ նիստում մեկ անգամ ևս քննարկվեցին Հայաստանյան Կլոր սեղանի 1999-2001 թթ. գործունեության հիմնական ուղղությունները, աշխատանքային հեռանկարները և ճշգրտվեցին առաջնահերթ ոլորտները:

Կեսօրից հետո ժողովի մասնակիցները հանդիպում ունեցան Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի հետ:

Այնուհետև ժողովի մասնակիցներին ընդունեց նաև Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ամփոփիչ զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը նրանց հայտնեց իր գոհունակությունը կատարված աշխատանքի և ժողովի արդյունքների կապակցությամբ:

Նույն օրը, երեկոյան, եռօրյա տարեկան նիստն ավարտեց իր աշխատանքները:

Ժողովին մասնակցում էին Հայաստանից՝ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Զուլչյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը, Շիրակի թեմի առաջնորդ Հայր Փառեն Ծ. վրդ. Ավետիքյանը, Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաջարյանը, Հայ Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչ Վերապատվելի Ռենե Լևոնյանը, Հայ Կաթոլիկ Եկեղեցու և «Կարիտաս» կազմակերպության ներկայացուցիչ Հայր Միքայել Մուրադյանը, Հայաստանյան Կլոր սեղանի գրասենյակի տնօրեն Կարեն Նազարյանը, «Ճեն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Հայկ Մինասյանը, «Էկո-99» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Վարդան Հայկազյանը, «Ֆիդայի» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Նատա Մնացականյանը, «ԲԻՄ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ասյա Խաչատրյանը: ԵՀԽ-ն ներկայացնում էր խորհրդի չորրորդ միավորման քարտուղար Ալեքսանդր Բելոպոպսկին, բրիտանական «Քրիստոնեական օգնություն» կազմակերպությունը՝ Էնթոնի Մահոնին, գերմանական բողոքական ընկերությունը՝ Կարոլին Կրուկովը և Պետեր Կորը, Ջինիշյան հիմնադրամը՝ Բուրհարդ Պետզոլդը, ամերիկյան «Միացյալ մեթոդիստական օգնության կոմիտե»-ն՝ Թերրի և Ջուդի Ուոլենները:

ԼԱՐԻՍԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ